Ծրագիրը համաֆինանսավորվում
է Եվրոպական միության կողմից

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ**
**«Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրու երիտասարդների հզորացում» ծրագիր**

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ
«Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի համակարգող

ՀԱՍՏԻՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Կենտրոնի աշխատակազմի և գործառույթների կառավարում և վերահսկում, լրիվ դրույք (40 ժամ/շաբաթ)

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
Ծրագրի ղեկավար

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- Վերահսկել Կենտրոնի գույքն ու ռեսուրսները,
- Ղեկավարել Կենտրոնի աշխատակազմին,
- Անցկացնել Կենտրոնի աշխատակազմի ժողովներ,
- Կազմակերպել Կենտրոնի առօրյա փաստաթղթավարությունը,
- Վերահսկել Կենտրոնի կարգուկանոնը և մաքրությունը և ապահովել գույքի բարվոք վիճակը,
- Կազմակերպել և վերահսկել Կենտրոնում անցկացվող գործողությունների անհրաժեշտ փաստաթղթերը և գործընթացները (օրակարգ, դիմումներ, գրացում, հետազոտական տվյալներ),
- Վերահսկել աշխատակազմի աշխատանքային ժամերը,
- Մասնակցել ծրագրային թիմի հանդիպումներին,
- Ներկայացնել իրականացված գործողությունների ամսական հաշվետվություններ,
- Ապահովել Կենտրոնի արտաքին ներկայացուցչությունը,
- Ապահովել Կենտրոնի գործողությունների տեսանելիությունը,
- Աջակցել ծրագրի ղեկավարին ծրագրին վերաբերող այլ հարցերում:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ
- Կրթության, սոցիալական աշխատանքի, հանրային կառավարման, կամ հարակից բնագավառներում մագիստրոսական աստիճան,
- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ ՀԿ ոլորտում,
- Երիտասարդական և ոչ-ֆորմալ կրթության ոլորտներում աշխատանքի փորձ,
- Թիմում աշխատելու և թիմ ղեկավարելու հմտություններ,
- Բարձր միջմշակութային հմտություններ,
- Բանակցելու և կոնֆլիկտների հանգուցալուծման հմտություններ,
- Հաղորդակցման և հռետորական հմտություններ,
- Հայերենի, անգլերենի գերազանց իմացություն, ռուսերենի իմացությունը ցանկալի է,
- Գրաֆիկական ծրագրերի իմացություն (CorelDraw, Photoshop),
- Համակարգչից և համացանցից օգտվելու գերազանց հմտություններ:

❖ *Աշխատողի աշխատանքային գրաֆիկը կազմվում է համաձայն Կենտրոնի աշխատանքային ժամերի:*

*«Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրիում երիտասարդների հզորացում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից և իրականացվում է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի փոքր դրամաշնորհային նախագծի շրջանակներում՝ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ և «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան» հիմնադրամ կոնսորցիումի կողմից:*